ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ 6 - ՐԴ ՕԼԻՄՊԻԱԴԱ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Մանկապատանեկան սպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի և 1.19-րդ կետի <<ա>> ենթակետի պահանջներով

կարգադրում եմ՝

1. Հաստատել
   1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրոցականների շախմատի 6-րդ օլիմպիադայի կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.
   1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրոցականների շախմատի 6-րդ օլիմպիադայի տարածքային փուլի անցկացման կազմակերպիչների անվանացանկը՝ համաձայն N 2 հավելվածի.
   2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրոցականների շախմատի 6-րդ օլիմպիադայի ներդպրոցական, տարածքային և մարզային փուլերի անցկացման ժամանակացույցը՝ համաձայն N 3 հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրոցականների շախմատի 6-րդ օլիմպիադայի կազմկոմիտեին /նախագահ Ա. Ղուկասյան/՝ կանոնադրության պահանջների համաձայն կազմակերպել օլիմպիադայի 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերը:
3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրեններին՝ սահմանված կարգով, առանց տարիքային սահմանափակման, ապահովել բոլոր դպրոցականների զանգվածային մասնակցությունը դպրոցականների շախմատի 6-րդ օլիմպիադային և համապատասխան արձանագրությունը եռօրյա ժամկետում ներկայացնել համապատասխան տարածքային փուլի կազմակերպիչներին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ